

Ա.Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

17-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԳԻՉ ՔՈՍԱ ԵՐԵՑԸ ԵՎ ՆՐԱ ԵՐԳԵՐԸ

Քոսա Երեցը պատկանում է մեր միջնադարյան, այսպես կոչված, մասնացված երգիչների շարքին:

Նրա մասին կենսագրական առանձին տեղեկություններ չկան: Իր երգերից և նրանց ընդօրինակման որոշ պարագաներից պարզվում է, որ նա ապրել և ստեղծագործել է 17-րդ դարում, եղել է բասենցի:

Քոսա Երեցից մեզ հայտնի է ընդամենը տասը երգ, որոնցից 8-ը գտնվում է 18—19-րդ դարերին պատկանող №№ 9266, 7715 և 3826 ձեռագրերում, իսկ երկուսը գրի է առնված 19-րդ դարի վերջերին՝ ժողովրդից: Դրանցից մեկը տպված է «Մասիս» ամսագրում (1884 թ., էջ 1045), իսկ մյուսը՝ Ե. Լալայանի «Ձափախքի բուրմունք»-ում (Բ մաս, էջ 22): Ձեռագրերով մեզ հասած երգերն անախյ են և նրանց մասին խոսվում է առաջին անգամ, իսկ տպագրված երգերի հրատարակողները չեն նկատել, որ այդ երկու երգն էլ պատկանում են նույն հեղինակին: Այսպիսով առաջին անգամն է, որ խոսվելու է Քոսա Երեցի, որպես 17-րդ դարի երգչի մասին:

Քոսա Երեցի երգերից առանձին նշանակություն ունի «Մասիս»-ում տպագրվածը մորեխի մասին: Այն հանգամանքը, որ այդ երգը երկու հարյուր տարի ապրել է ժողովրդի մեջ և հետո միայն գրի առնվել, ցույց է տալիս, թե որքան սիրված է եղել այն՝ ժողովրդի կողմից: Դրա պատճառն այդ երգի թեման և նրա ժողովրդական մշակումն է:

Ինչպես հայտնի է, միջնադարյան չարքաշ աշխատավորության դրուժյունը ծանր է եղել ոչ միայն երկրի ներքին ու արտաքին տերերի, այլև բնական բազմաթիվ շարիքների ու պատահարների պատճառով, որոնց մեջ ամենասոսկալիներից մեկն է եղել մորեխային համաճարակը:

Հայտնի են բազմաթիվ գեղարքեր, երբ մորեխային աղետների պատճառով տեղի են ունեցել սով և նույնիսկ դաղթեր: Ժողովուրդն այդ վնասատուին պատկերել է օտար բռնակալների նմանությամբ, իսկ վերջիններիս էլ՝ մորեխի: № 5707 ձեռագրի գրիչը, Լանկ-Թեմուրի արշավանքի սարսափները նկարագրելիս, չի մոռանում նաև նույն ժամանակ մորեխի կատարած ավերը հիշել, գրելով, որ Թեմուրն ու մարախը միասին մտան մեր երկերը և ավերեցին այն:

Նշված երգում նախ նկարագրվում է մորեխի («կիտուրի») վնասը:

Նա նա, նա նա,

Ձա նա, նա նա.

Կիտուր եկաւ, հասաւ Թոփեր,

Կերաւ ցորեն, մնաց չօփեր:



Այսինքն՝ մորեխը հասավ մինչև Մուշի մտա գտնվող Խոփեր գյուղը՝ ոչնչացնելով բերքը: Ապա երգիչը լրիվ պատկերացնելով աշխատավոր գյուղացիութանն սպառնացող ահավոր վտանգը, բացականչում է.

Հաւար, կիտս'ւր, մատանթ, կիտս'ւր,  
 Ամէն արտուց քիլէ մ'տուր,  
 Աշուն կանենք ձուար, պլլղուր,  
 Ուր չըկանկնենք տուշմընի դուռ:

Այսինքն, էլի դու խղճա և օգնիր մեզ, մորեխ, յուրաքանչյուր արտից մեզ մի քիլէ (չափի միավոր) ցորեն տու՛ր՝ ձափարի և պլլղուրի համար, որ մենք ստիպված չդիմենք մեր գուշման-հարուստներին:

Քոսա Երեցի երգի հաջորդ տան մեջ մենք տեսնում ենք գյուղացու բերքը հափշտակող մյուս հրեշիւն. դա ժամանակի իշխանությունն է, որը, հաշվի չառնելով ժողովրդի ծանր դրությունն ու համաճարակի հետևանքները, իր ներկայացուցիչներին է ուղարկում՝ կալերից բռնազանձելու բերքի այն չնչին մասը, որ փրկվել է մորեխից:

Երկինք ամպեց, կիտուր թափեց,  
 Կիտուր թափեց, դարտեր լափեց,  
 Ցորեն չեղաւ, շահնէն չափեց...

Այսինքն, երկինքն ամպեց, բայց բարերեր անձրևի փոխարեն, մորեխ տեղաց արտերի վրա, լափեց արտերը և ցորեն չեղավ: Ու չնայած գրան, էլի «շահնէն չափեց»: Այս վերջին բառերի բացատրության համար հրատարակողը կցել է հետևյալ տողերը. «Կառավարության տասանորդի մի պաշտոնյա, որ կալերու ցորյանը կը չափէ (ըսել է, որ ցորյան չեղաւ, բայց տասանորդի տուրքէն դարձյալ ազատ չեղանք)»:

Անա Քոսա Երեցի առաջին երգի բովանդակությունը Այստեղից էլ պարզ է, թե ինչու դարեր շարունակ այդ երգը ապրել է ժողովրդի մեջ: Այստեղ չափաի մոռանալ այդ երգի մյուս արժանիքները ևս, որոնք մեծ դեր են խաղացել նրա երկարատևության և տարածման գործում: Դա այդ երգի խոսակցական լեզվով և ժողովրդական երգերի առանձնահատկություններով հորինված լինելն է: Այս վերջին հանգամանքը, այսինքն ժողովրդական երգերի նմանությունը այնքան ուժեղ է, որ կարելի է ասել, Քոսա Երեցը ոչ թե գրա հորինող-հեղինակն է, այլ այդ երգի մշակող-տարածող երգիչներից մեկը: Մեզ հայտնի են այդ երգի տպագիր ու ձեռագիր բաղմամբիվ օրինակներ՝ տարբեր ծավալով և աներով, բոլորն էլ գրի առնելով 19—20-րդ դարերի բանահավաքների ձեռքով: Դրանք հեղինակի անուն չունեն, գրի են առնված Մուշի, Վանի և այլ շրջաններում: Դրանց մանրամասն ուսումնասիրությունն առանձին գործ համարելով, բավարարվենք առայժմ միայն որոշ նշումներով: Արշակ Բրուտյանի «Ռամկական մրմունջներ»-ում (1901 թ.) կա այդ երգի 2 օրինակ: Առաջինում ուշագրավը մի շարք վայրերի հիշատակումն է: Օրինակ, Խոփեր գյուղից բացի, հիշատակված են «Ամբէի դուռ», «Բագնոց», «Վան», «Մնուս», «Արզրում», «Արփաշայ», «Գուժրի»: Եվ մորեխն ուր գնում է՝ ավերում ու այրում է, գրկելով «խղճուկ ըորնչպարին»: Մորեխը պատկերված է ուղղակի հրեշի նման.



Կիտուռն ուրին տուեց յեզեր,  
 Կերաւ ցորեն, խոտի գէզեր,  
 Պրծաւ՝ իր թաթեր կլիզեր.  
 Վնյ, լըմըն կիտուռ, վնյ, լըմըն թրթուռ,  
 Աւիրիւր քու տուն, դրուէ՛ր քու դուռ:

Նույն աղբյուրում տպւած 2-րդ օրինակը գրի է առնված Վանում:  
 Ունի կրկնակ, որը հիշեցնում է Քոսա Երեցի երգի կրկնակը.

Նանընա, նանայ, նանընայ, քեթուռ,  
 Զանընա, նանայ, կանանչ թրթուռ:

Կարելի է ենթադրել, որ այս «կիտուռի» մտախփը ավելի հին է, քան 17-րդ դարը: Քոսա Երեցն այս երգի շնորհիվ արժանի է հատուկ ուշադրութեան, որովհետեւ միջնադարում ժողովրդական երգերի մշակման և նրանց մեջ սոցիալական մոմենտները բնագծելու տեսակետից նա մեզ ծանոթ եղակի հեղինակներից մեկն է:

Քոսա Երեցի հաջորդ ուշադրով երգն անտիպ է և գտնվում է Մատենադարանի № 9266 ձեռագրում: Դա մի երգիծական ստեղծագործութեան է, որն ունի փոխարեքական իմաստ: Այդտեղ նկարագրվում է ինչպես ինքը՝ երգիչը մի անգամ խմել, հարբել է և կորցրել իր «ջղզանը», այսինքն՝ թրղթապանակը: Եվ ահա այդ կորուստը գտել է մի «աղվես».

Սարերն է արածեր, դմարմին է սլտեր,  
 Հեռ-հեռիս ժուռ եկեր, ջրղզանս այ կղեր,  
 Տես, անիձել աղվեսն ինչ հեռ այ մտեր,  
 Թղզերն ետ բացեր՝ կարմիր-կասուռ էր:

Իբր թե աղվեսը կարդալով հասկանում է բոլոր փաստաթղթերի բովանդակութեանը, ապա ժողովում է բոլոր աղվեսներին, սլտամում, որ ինքը գեռ Նոյան տասլանի մեջ է գրագիտութեան սովորել և ամենախելոք կենդանին է: Հավատալով նրան՝ մյուս աղվեսներն ասում են.

Ասացին. «Աղվես, դուն մեզի ամիր, իշխան,  
 Ի վերայ գաղանացն ես սուլթան ու խան,  
 Երպ աթոռակալէն էկեր սլտասխան՝  
 Այլ Քոսայ էրէցն դուր շամիչ կուտէ՞»:

Հավանաբար հեղինակն այս այլաբանական երգի համար նյութ է գարձրել մի իրական դեպք. երբ՝ կեղծ փաստաթղթերով, ինչպես բնորոշ էր միջնադարին, իր հոգևոր սլաշտոնը մի խորամանկ հոգևորական իր ձեռքից խլել է, ունենալով նախապես «աթոռակալի» հրամանը: Դա հաստատվում է նաև վերջին տան շնորհիվ, ուր երգիչը գրում է, թե ինչպես իր փոխարեն իր հաջորդն է սխել ժողովրդից հավեր ժողովել: Ահա այդ տունը.

Ես Քոսայ էրէցն եմ, դուն՝ սլտան աղվես,  
 Զրղզանս առեր էս, մեջ ձուներուն կու շաղուես,  
 Իշխանութիւնս առեր, հաւեր կու ժողովես,  
 Այս քեզի չի մնար, տէրն մահսուռ է:



Նրա համար հոգևորական պաշտոնի կորստաւար լուրջ մտահոգութեան առարկա չէ: Նա լայն հայացք ունի կյանքի վրա, աշխարհիկ կյանքի ու կենցաղի սիրահար է, ժողովրդին հարազատ մարդ, որի համար իր հոգևորականի պաշտոնն ասես թե ավելորդ է եղել: Այդ նույնն արտահայտվում է նաև Քոսա Երեցի սիրո երգերի (որոնցից մեկ հասել է վեց համուշ), ինչպես նաև արամախոսական մի երգի մեջ, ուր գրույցը գնում է իր և սիրունու միջև.

[Սիրունին].--Կու թվի, թէ դու տէրտէր ես,  
Թխտով, գրով դիւ կու երես,  
Վնդն էկէ, դաստուած կու սիրէս,  
Կեսրարի տէր եմ, խօճ գիտես:

[Քոսա Երեց].--Քո կեսրարն գիտէ՝ ես օվ եմ,  
Քոսայ էրէցն եմ ու խէյլ եմ,  
Քեզիք զանազան կու կօվեմ,  
Խօշ իմ նազլու խան[ն] դու ես:

Նա ջերմորեն սիրում է աշխարհը, կյանքը.

Քոսա էրէց, է՞ր կու մեռնիս,  
Մի անձներ աշխարհէն անուշ,

ասում է նա իր սիրո երգերից մեկում: Այդ երգում նա այնքան մոտ է ժողովրդական ստեղծագործութեանն որքան, որ թվում է, թե «Կիտուուի» նման, հիմք է ունեցել ժողովրդական բանահյուսութեանը: Որպես օրինակ, կարելի է նշել յուրաքանչյուր տան 4-րդ տողը, որը մի փոփոխվող (ոչ կայուն) կրկնակ է.

Փարք ու պատիւ գրէն անուշ:  
Անգին չոր ջուհարէն անուշ:  
Ծայնդ կուկեր քարէն անուշ:  
Հանէր մուտն աշխարհէն անուշ... և այլն:

Ժողովրդական երգերի այս բույրը մենք գտնում ենք նաև Հովհաննես Թումանյանի մոտ:

Բարի լուսի զանգեր զարկին  
Ձնգզնգալեն անուշ անուշ.  
Հովտում ասուն խոխոջում է  
Գլգլալեն անուշ անուշ... և այլն:

«Անուշ» կրկնվող բառը, որ կա թե Թումանյանի և թե Քոսա Երեցի մոտ, ժողովրդական ստեղծագործութեան հետք է, որի նմանները գտնում ենք Մ. Աբեղյանի հրատարակած ժողովրդական խաղիկներում. այսպես՝

Ձենիկդ կուգեր սարէն անուշ,  
Ձենիկդ կուգեր լեռնէն անուշ,  
Անուշ-անուշ խոտ կըէր (կար) քյո ծոց<sup>1</sup>.

Մ. Աբեղյան, ժողովրդական խաղիկներ, էջ 297, 2010-րդ երգ:



Այս տան սկզբի 2 տողը համարյա նույնությամբ կա Քոսա Երեցի մոտ.

Առայտուն կակվի նոման,  
Ծայնդ կուկեր քարէն անուշ:

Նա հաճախ որոշ տողեր ժողովրդից առնում է նույնությամբ, ապա այդ ֆոնի վրա ստեղծում է նոր ու ինքնատիպ երգեր, որոնք շատ մեծ թարմությամբ են հնչում մեր միջնադարյան պոեզիայում:

Քոսա Երեցի երգերում գտնում ենք որոշ տեղեկություններ, որոնք ունեն կենսագրական նշանակություն:

«Փարք ու պատիւ տսեմ...» երգի մեջ նա նկարագրում է իր սիրուհուն, տալիս նրա անունը, հայտնում նրա և իր հայրենիքը և այլն. այսպես՝

...Կուզեմ թարխ պանեմ պարոն Աննայիս...

Կամ՝

Քեզիք Աննայ կասեմ՝ երկիրն Ղարսայ,  
Ջքանչելի, զարմանալի բան մի տեսայ,  
Երկրէն Բասեմու, էրէց մի քոսայ՝  
Մնացեր սարկարտան, սիրուտ շիւարէր...

Քոսա Երեցի մի ուրիշ սիրո երգից տեղեկանում ենք, որ այն ժամանակ Երևանը հայտնի է եղել իր մուշտակներով: Նա, սիրուհուն գովելիս, գովում է և նրա հագուստը՝ ասելով.

Քուրքեր էս հաքեր էրվանայ,  
Սէրս քոյ սիրուտ սարւան այ... և այլն:

Քոսա Երեցից ունենք նաև 2 հոգևոր երգ, որոնք հետաքրքրական են մի կողմից իրենց արվեստով, իսկ մյուս կողմից՝ հեղինակի աշխարհայացքի հակասական կողմերի տեսակետից:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ 17-րդ դարի երգիչ Քոսա Երեցը մի ուշադրով հեղինակ է, որը պատկանում է այդ դարում ժողովրդական պոեզիային հավատարիմ մնացած այն գրագետ երգիչների խմբին, որոնց ցայտուն ներկայացուցիչն է Նազաշ Հովնաթանը:

Ստորև ներկայացնում ենք Քոսա Երեցի վերահիշյալ բոլոր 10 երգերը: Չնայած բնօրինակողների և գրի առնողների կողմից այդ երգերի մեջ մտել են որոշ ազավաղումներ, սակայն մենք չենք փորձում դրանք ուղղել՝ բացառությամբ մի երկու դեպքից:

### 1. [Կ Ի Տ Ո Ի Ր]

Նա նա, նա նա,  
Ջա նա, նա նա:  
Կիտուր կիաւ, հասաւ Թոփեր,  
Կերաւ ցորեն, մնաց չօփեր:  
Հոււնր, կիտուր, մատաթ, կիտուր,  
Ամէն արտուց քիլէ մը տուր,  
Աշուն կանենք ձաւար, պըլղուր,  
Ուր չըկանկենք տուշմընի դուռ:



Երկինք ամպեց, կիտուր թափեց,  
 Կիտուր թափեց, դարտեր լափեց,  
 Յորեն չեղաւ, շահնէն չափեց:  
 Հաւա՛ր, կիտո՛ւր, մատա՛թ, կիտո՛ւր,  
 Ամէ՛ն արտուց քիլէ մը տուր,  
 Աշու՛ն կանենք ձաւար, պըլլուր,  
 Ուր չըկանկնենք տուշմընի դուռ:  
 Մեռնի՛մ քըղի, սըրը Կարապետ,  
 Ըմէ՛ն սըրերու դօրապետ,  
 Քօսէ՛ն մատաղ կանչեց զիւր ճետ,  
 Կիտուրն եկաւ թրթուրն ի հետ:  
 Հաւա՛ր, կիտո՛ւր, մատա՛թ, կիտո՛ւր,  
 Ամէ՛ն արտուց քիլէ մը տուր,  
 Աշու՛ն կանենք ձաւար, պըլլուր,  
 Ուր չըկանկնենք տուշմընի դուռ:

Մասիս, 1884 թ., էջ 1045

(Տպագրված է «Մշկեցւոց երգեր» խորագրի տակ):

## 2.

Կուզեմ կանկաղ անեմ ի սատանայէ,  
 Որ ի վերայ ամէնեցուն հասուտ է.  
 Հարպաց մարդն, որ պատուհասի հանդիպի,  
 Ասեմ, թէ. Սատանան արաւ,—նայ սուտ է:  
 Փարազատ էի, ոչ նստեցայ իմ տանս,  
 Որ հարպեցայ և կորուցի ջրզգանս,  
 Թուխթ ու թանաք, կիր ու մօրն մատանս՝  
 Ի ժանիս կազանաց, վախեմ՝ թէ ուտէ:  
 Հայն աղվես կասէ, թուրքն՝ ուսովի,  
 Թխդերն գայ շանես, քեզ կու խոսիլի,  
 Հարպաց մարդայ սպանօղն նոր կու մեռունովի,  
 Ի մէջ Ագամայ գրախտին նայ էլ ու մուտ է:  
 Սարերն է արածեր, զմարմին է պտեր,  
 Հեռ-հեռիս ժուռ եկեր, ջրզգանս այ կղեր.  
 Տես, անիձեղ աղվեսն ինչ հետ այ մտեր,  
 Թխդերն ետ բացեր՝ կարմիր-կապուտ էր:  
 Մէք գիրն էլ ետ բացել՝ մօրն ու նշան,  
 Կարգացեր ու դարձեր էր խիտ ուրուշան,  
 Մարդ եր ծկեր աղվեսն չորս քովշան.  
 «Արիք, գիւան արէք, նոր տարէմուտ է»:  
 Մէք գիրն էլ ետ բացեր, խիտ հազ է արէր,  
 Վրան թուրլու-թուրլու աւազ է արէր,  
 Աղվեսներն ժողովեր, խիտ շհազ է արէր.  
 «Այտ գիրդ մեզի բարի ու մէկ ումուտ է»:



Աղվեսներն ժողովեր խի[ս]տ փիր ու ջիւան,  
 Ղարաքիլիսու տակն դարկեր՝ մեծ դիւան,  
 Թխդերն կարդացեր, դարձերն հաւան,  
 Ասացին. «Այտ աղվեստ մեղի գասուտ է»:

Ասացին. «Աղվես, դու ինչ փառաց տէր ես,  
 Որ այդ թխդերդ դուն մէկ-մէկ առաջ կու պէրէս»:  
 Ասաց. «Նոյայ տապանն կմ կարդացեր ես»:  
 Մակար՝ այդ աւալդ[ան] գրոց հմուտ է:

Ասացին. «Աղվես, դուն մեղի՝ ամիր, իշխան,  
 Ի վերայ դազանացն ես սուլթան ու խան,  
 Երպ աթոռակալէն էկեր պատասխան՝  
 Այլ Քոսայ էրէցն դուր համիչ կուտէ»:

Ես Քոսայ էրէցն կմ, դուն՝ պարսն աղվես,  
 Զրդդանս առեր էս, մէջ ձուներուն կու շաղուես,  
 Իշխանութիւնս առեր, հաւեր կու ժողովես,  
 Այտ քեզի չի մնար, տէրն մահպուտ է:

Ձեռագիր № 9236, թերթ՝ 4ա—4բ,  
 Ճամանակ՝ XVIII դ.:

## 3.

Քոյ ըսակդ[ժող]ին տամ գոհութիւն,  
 Փարք ու պատիւ գրէն անոշ,  
 Տուէր քեզ թառ խօրօակութիւն,  
 Անգին չոր ջուհարէն անուշ:  
 Քեզի կովեր կմ պէկուման,  
 Գին կմ արեր դողս[ան] թուման,  
 Ասայտուն կակիլի նոման  
 Ծայնդ կուկեր քարէն անոշ:  
 Հողն ու ջուրն, քամին [ու] հուր  
 Արեր մէք-մէքու բարէհուր,  
 Չորս դարէրն բերեր դուհուր,  
 Հանէր մուան աշխարհէն անուշ:  
 Մանուշաք բուսեր է հօլտին,  
 Հոան անոշ՝ խօր[օ]տ-մարտին,  
 Պայծառ աստղ ես առ[աւ]տին,  
 Որժամ ելէր մօրէտ անոշ:  
 Նխշուն կակաւ սիրուն երամ  
 Քաշ արծիւէն կասէր վերամ,  
 Զարկեց, էրաց արան-գարան,  
 Բաժանեց կայր-կարէն անուշ:  
 Պուլպուլ վարթէն հասրատ ունէր,  
 Զօր ու գիշեր փիրկաթ ունէր,  
 Փարաթ փշէն կանկատ ունէր,  
 Նստէր՝ զլայ խարէն անոշ:



Սիրուա հօլերն մաղելով,  
 Վարթի շաղերն քաղելով,  
 Պաղ աղսուր ես ձիծաղելով,  
 Որժամ կուկեր սարէն անոշ:  
 Հրեշտակաց կարքն առնիս,  
 Հրեղինաց դասն խառնիս,  
 Քոսայ էրէց, է՞ր կու մեռնիս,  
 Մի անձներ աշխարհէն անոշ:

Ձեռագիր № 9266, թերթ՝ 3բ—4ա,  
 ժամանակ՝ XVIII դ.:

4. Խ Ա Ղ

Սիրուն յեարն ելեր ի սեյրան,  
 Դառցի, թեղ արի, թեղ արի.  
 Ասօր հուր եմ, վաղը կերթամ,  
 Խիստ մի պէզարի, պէզարի:  
 Նազու, վաղ չեմ գար ի քէնէ,  
 Քանի որ աշխարհս շէն է,  
 Երբ մեռնիմք գոյքս մէկ տանէ  
 Մէջ մէկ մաղարի, մաղարի:

Մեռնինք ու էրթանք դատաստան,  
 Տէրն աղաչեմք, անենք տաստան,  
 Մեզ տա դրախտ ու բուրաստան,  
 Հայ թէ հազ արի, հազ արի:

Քուրքեր ես հաքեր էրվանայ,  
 Սէրս քոյ սիրուա սարվան այ՛,  
 Դուն ես նառ, ես եմ փարվանայ,  
 Ժուռ գանք կաղարի, կաղարի:  
 Քեզի պէս մանկաիք հարիւր հաղար,  
 Մէկ մի չիկայ հետ ինձ պաղար,  
 Գնա, արայ այլոց նաղար,  
 Ինձնէ վնդ արի, վնդ արի:

Քօսայ էրէցն եմ, խիստ կուլամ,  
 էրթամ գանկտիմ շահի արամ,  
 Տարտերս ամէն առնեմ դալամ,  
 Գրեմ յեաղարի, յեաղարի:

Ձեռագիր № 7715, թերթ՝ 49ա—49բ,  
 ժամանակ՝ XVIII դ.:

5.

Փարք ու պատիւ ասեմ ես քոյ արարչէն,  
 Որ ամենայն փառօք զքեզիք դարթարեր.  
 Կուզեմ թարխուլ անեմ պարոն Աննայիս,  
 Թառ պօ՛րին, թառ պուխախին թառ արմատ առեր:

<sup>1</sup> Ձեռագրում՝ «սարվան է»:



Մէքանըդ Ղարս կու կենաս, մէսկանդ մեջան.  
 Պանկէրդ էրէսիա հազի ու պէջան.  
 Մէջ բերնիտ նայեցի և լալ ու մարջան,  
 Նոր սագաւ է հանաց, մարքարիտ շարէր:  
 Այլն ու եշիլ հանեց, կարմիրն հաքաւ,  
 Մանդրիք թոջնոց նման ասողէ թաքաւ,  
 Ես քեզիք՝ դարծիւ, դուն նախշուն կակաւ,  
 Փախչելով կու բնակիս դու Ղարսայ քար[եր]:  
 Հողն ու ջուրն ու քամին, կրարք — հետ իրաց,  
 Միայրանն էն եղէր զիրարէ սիրաց,  
 Տէրն օրինեք քեզիք ի շորս տարերաց,  
 Գաննան եղանակին նման զարթարեր:  
 Գուն ես աղբուր նման, ջուրն ես պաղ աղին,  
 Որ պիտէ համառան տապ եղանակին,  
 Կամ աշուն՝ քաղցրհօտ իւր ժամանակին,  
 Կամ ձմեռն, որ դարձեր որ կաննան դարեր:  
 Քեզիք Աննայ կասեն երկիրն Ղարսայ,  
 Զքանչելի, զարմանալի բան մի տեսայ,  
 Երկրէն Բասենու էրէց մի քոսայ՝  
 Մնացէր սարկարդան, սիրուտ շիւարէր:

Զեռագիր № 9266, թերթ՝ 3ա—3բ,  
 ժամանակ՝ XVIII դ.:

## 6.

Հետի ձէկուն բարի լուսուն,  
 Գառ չեմ կործել կործ մի բարի,  
 Հանկարծակի եայր մի տեսայ,  
 Նոր ամիս եղաւ նոր տարի:  
 Այսի.— Բան մի ասեմ՝ լսէ,  
 Անուշ բաներուս հաւասէ,  
 Պունդ վարդի փուշն հուսէ,  
 Պուլպուլի պէս միեայնորի:  
 Ասի, թէ.— Կարմիր ու ալ էս,  
 Ինչ որ հաքնես՝ բարով վայելէս,  
 Երբ որ նազու-նազու քա[յ]լէս,  
 Առաւել սէրս կո յրթորի:  
 Փուշ աստորս զուր կու դադիս,  
 Օր մի դու աշակից կազատիս,  
 Ականջ էրայ իմ խրատիս,  
 Տէրն տայ քեզ բազում բարի:  
 Սէրտ էրէր սիրաս հերկէր,  
 Մէջն ըռէհան եմ մարկէր,  
 Հինք թանափով չատիր զարկէր,  
 Տեղ պատրաստ է, ել ու արի:



Արի, տես գիրն ի՞նչ է կրաց՝  
 Մաքուր սիրոյ տուողն աստուած,  
 Ինձ ու քեզ միայն չէ տուաց,  
 Տուէր՝ ամէն մարմնայորի:  
 Զուլում կենէս այդպէս դագով,  
 Զոմբա կու անցանես վատով,  
 Քանի՞ կենաս դուն խորիեատով.  
 Ուռուհուրթիւնդ կու խաւարի:  
 Խնդրեմ ի արարչէն դայիմ,  
 Վերայ սիրուտ կենաս դայիմ,  
 Սիրուտ մանսուպովն եմ դայիմ,  
 Առանց կեղի ու թումարի...<sup>1</sup>

Ձեռագիր № 9266, թերթ՝ 2բ,  
 ժամանակ՝ XVIII դ.:

## 7.

Գէղէն վերև հերկեր-մերկեր,  
 Շապիքտ սուրմայով ներկեր,  
 Սիրեր եմ, չեմ կրնայ թէարկեր.  
 Արի խօսինք, ջորած նազլու,  
 Քընց բիւրբիւն էլ ձէնով նազլու:

Էկար անցար ու եար էրիր,  
 Ձեռքդ էրէսիտ պատ էրիր,  
 Դուն սիրեցիր, դուն եար էրիր.  
 Արի խօսինք, ջորած նազլու,  
 Քընց բիւրբիւն էլ ձէնով նազլու:

Քէօսայ երիցն եմ քահանայ,  
 Աչվնուտ չկայ մահանայ,  
 Դու ինձի ըրիր դիւանայ.  
 Արի խօսինք, ջորած նազլու,  
 Քընց բիւրբիւն էլ ձէնով նազլու:

Ծ. Լալայան. Ձալաթքի բուրձունք,  
 Բ, էջ 22:

## 8.

.....<sup>2</sup>  
 — Դուն կրողէն էլ այն չունիս,  
 Իմ տեսութեանն քոյ շահ չունիս,  
 Էշխիայ կու ու այն չունիս,  
 Չեմ գիտեր, թէ ինչ խելաց հետ կու:

<sup>1</sup> Պակաս է. ձեռագրից թերթեր են ընկել:

<sup>2</sup> Սվիդրը թերի է. ձեռագրից թերթեր են ընկել:



— Ես էլ քեզիկմէնէ շահեմ,  
 Թանք արևս եզժան կու ծախեմ,  
 Առ[ն]ո[ղ]ներէն ես կու վախեմ,  
 Պաս պայլու դուն ելաց գիտես:  
 — Կու թվի, թէ դու տէրտէր ես,  
 Թխտով, գրով զիս կու երես,  
 Վազն էկէ, զաստուած կու սիրէս,  
 Կեսրարի տէր եմ, խօհ գիտես:  
 — Քոյ կեսրարն գիտէ՝ ես օլ եմ,  
 Քոսայ էրէցն եմ ու խէվ եմ,  
 Քեզիք զանազան կու կօլիւմ,  
 Խօշ իմ նաղլու խան[ն] դու ես:

Ձեռագիր № 9266, թերթ՝ 3ա,  
 ժամանակ՝ XVIII դ.:

## 9.

Ծօ՛, անխմար, սուտ աշխարհս զի՛նչ էկիր,  
 Լուսուտ ես մերկացիր, չունիս գործք բարի.  
 Կերիր, խմիր, մարմնուտ կամքդ կատարեցիր,  
 Հոգիտ աղքատացեր, չունիս գործք բարի:  
 Հոգիտ մարմինտ ի միասի[ն] ստեղծեց,  
 Երկունքն ի միմիանց կղբայր [նա] կոչեց,  
 Միտքբա միջի նոցա դադօղ հաստատեց.  
 Յէ՞ր չես ուղիղ դատեր, չունիս գործք բարի:  
 Զօր ու գիշեր ծուլացել ես աղօթից,  
 Անըռանմ ես, չես ողորմիլ աղքատից,  
 Լեզուտ բանրասօղ է, յորդորիչ չարից.  
 Մէջ մեղաց ես թմրեր, չունիս գործք բարի:  
 Զար մշակ ես եղել, մարմնուտ կու դատիս,  
 Քիչ ապրիս, շատ ապրիս՝ օրմ կու մեռնիս,  
 Փողն օր փչէ՝ դատաստան երթալ պիտիս.  
 Կուզեն քեզանէ համարներ, չունիս գործք բարի:  
 Զարաչար անօրէն մեղքերտ դատի[ն],  
 Յառաջ բերեն ձեռագիր սատանային,  
 Քօսայ էրէց, չես տալ [դու] պատասխանին.  
 Ճարտար լեզուտ կապեր, չունիս գործք բարի:

Ձեռագիր № 3826, թերթ՝ 160բ—161ա,  
 ժամանակ՝ XVIII—XIX դդ.:

## 10.

Յորժամ խելքբա առիր, ճանաչեցիր տէրբա,  
 Փութով աշխարհս մի կկիր մուտ, շուտ աշխարհս մի սիրեր.  
 Դուն քեզի յիմացար, որ հոտ չես մնալ,  
 Դնալոց ես շուտ. աշխարհս մի՛ սիրեր:



Առաքեալն Յակոբ տեառնեղբայր առայ.  
 Չար, անօրէն, մեղաւոր, կեղծաւորաց.  
 Սէր աշխարհիս՝ թշնամութիւն է աստուած.  
 Բոնէ խօսքդ, վատ [աշխարհս մի՛ սիրեր]:  
 Վաղ չես դալ մեղաց, մինչև յմօր գործես,  
 Սիրտդ՝ քար ապառաժ, խոստովանիլ չես.  
 Վաղն՝ անհղ ատենին համար տալոց ևս.  
 Անդարց մնալ մութ [աշխարհս մի՛ սիրեր]:  
 Պակասեցաւ, գնաց ձեռաց օրերտ,  
 Գնն առ քահանայն, ասա գործերտ.  
 Գլխաւոր, մահացու, ներելի մեղքերտ  
 Պահել, ելնուլ սուտ աշխարհէս՝ [մի՛ սիրեր]:  
 Քոսայ էրէց, գրոց բանին յետելի,  
 Դատաստանին օրն քեզ կաննին դաւելի,  
 Մկրտութեան լուսա՝ փոխեն խաւարի.  
 Անով կացի, փութ աշխարհս մի՛ սիրեր:

Ձեռագիր № 3826, թերթ՝ 160ա—160բ,  
 ժամանակ՝ XVIII—XIX դդ.: